Աննա Դավթյան

Մարկոյի համար

Երկիրը՝ չռված սպասում,

պառկած է հաջորդ քարտեզին,

Ինձ կուլ է տալիս միայնության կոկորդը:

Պարում եմ Բրյուսել քաղաքի ապակիների մեջ՝

բազմակի թեւերով,

Անցյալը տարել է նրան, ինձ խաբող սեր, անցյալ մեծ պայթյունը

տարել է նրան, ով կարող էր դեռ գալ,

Ամերիկան Հայաստանի կեսը կարմիր է ներկել՝ որպես հնարավոր նոր պատերազմի զոնա,

ու պետք չէ մարգարե լինել՝ հասկանալու աղետի

սույետան,

Ու պետք չէր զգայուն-շրթունք-բալասան լինել,

իսկ Թագավորական հրապարակում տագնապի համար

չափում են զարկերակը:

Իմ խոնարհություն, ետ վերադարձիր,

Ետ վերադարձիր, պոռնկության իմ ցավ:

Իմ նորածնի բարակ ոտքերը՝

սնարից կախ,

Ու աստված իմ մեջ՝ քաղված տղաների ձեռքերով, որի կեսն արդեն մեռած էր ու թաղված նույն երկնքում:

Կմեռնես, թե ինձ չլսես, լսո՞ւմ ես:

Մի սիրիր նրան, այս պատերազմի մեջ

մի սիրիր նրան:

Մի մերկացրու ներսի բաց ցավը:

Իմ ջախջախված ձեռքերը նվերներ են առնում՝

մտքով,

որ դրանք դիմանան ռմբակոծության լոթի սահանքներին:

Համբուրվել է մի կույս,

որը չի իմացել պատերազմը բղջախոհության մեջ:

Սպանողի նշանի:

Իսկ ես գետիններն եմ պատռել:

Կանայք գետիններն են պատռում,

Ու հետո նրանց պատռված փորի մեջ լցնում են մատներ, թաթեր, ականջներ ու կոկորդը նրանց:

Մարմին մինոր

Իմ թագ

Բարակ ապակիների մեջ

Վիշտ իմ

Ամպեր-ու-արցունքներ-իմ-ցավ

Աստծուն մոտ կանգնած սրբերից մեկը կրակել է մեր բախտի վրա:

Կեղտոտ ձեռքերով մարմինս է ափլփում

մնացորդը կյանքի:

Այս պարը տխրություն անգամ չէ:

Շռայլությունը չէ դրա:

Չե՞ս տեսնում հողն ինձ վրա:

Մեկն ինձ ասաց՝ պետք է երջանիկ լինել:

Եւ այդպես էր ասում նաեւ գերմանացի

մի ոստիկան,

Որ կունիի տեսաբան էր ու սիրում էր եբրայերեն:

Ինձ այստեղ գցել են մեկի հետ, որի հայրը թուրք է, մայրը՝ հրեա,

բայց նա ուզում է զոհը լինել,

ոչ թե դահիճը,

ու ընտրել է իր ինքնությունը.

նարինջների վրա թանաք է քսում ու տպում թղթի վրա,

Այդպես նա հարաբերվում է արվեստային աշխարհի հետ,

Այդպես նա հանգիստ է ու կարտոնի վրա նկարած

վերադարձնում է Երուսաղեմը:

Կարսի անունը թեւերիս մեջ:

Թանաքը կարմիր չէ:

Իսկ Մարկոն նկարում է ամպեր ու արցունքներ, ամպեր ու արցունքներ, ամպեր ու ջուր,

Մարկո, դա բավարար չէ,

Նկարիր որդան կարմիր արյունով:

Խնդրելու բան անգամ չէ:

Երկիրը վերադարձը չէ իմ:

Ես չգիտեմ այլեւս ինչը կարող է վերադառնալ:

Ընդունո՞ւմ եմ արդյոք համակ տապալումս:

Տապանաքարը աստծո վրա: Տապանաքարը ինձ վրա:

Դագաղը, մարմին մինոր, դագաղը: Ամեն հաջորդ պահի:

Մտիր՝ թեկուզ պարելով:

Քո հոգուց թռածը քեզ հետ է:

Բայց մխիթարել չէ, որ ուզում եմ:

Երկրի կեսը կարմիր է՝ ինչպես ամբողջ երկրի սիրտը:

Ո՞ւր ես դու քշելու քո սիրտը նրա սրտից:

Ո՞վ է քո բանագնացը:

Երբեւէ չունեցած երջանկության ժամի:

Այնպես որ՝

խաղաղվիր,

խոնարհվիր հետ:

Մխա: Մեռիր: Մոռացվիր:

Ու մի ողբա:

Ամեն դեպքում՝

Քանի դեռ ողջ ես,

Քանի դեռ քո սերն ու հուսահատությունը

Ողջ են:

(Մարկո, հիմա հուզիչ մի բան Եւրոպայի համար

Ամպերը՝ արցունքների բանակատեղին,

Ճոճում են իրենց բրեզենտե կողերը

Ու ցած են թափում կաթիլներ.

ինչքա՜ն գեղեցիկ է աշնանային տաք ձմեռը,

Օ՜, սպեղանի քույր իմ):